

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հնդկաստանի կառավարությունը, որոնք այսուհետև կանվանվեն «Պայմանավորվող Կողմեր»,

հանդես գալով որպես մասնակից կողմեր «Սիջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի, որը բաց է ստորագրման համար 1944թ. դեկտեմբերի 7-ից,

ձգտելով խթանել երկկողմանի հարաբերությունները քաղաքացիական ավիացիայի բնագավառում և կնքել համաձայնագիր՝ իրենց համապատասխան տարածքների միջև ու նրանց սահմաններից դուրս կանոնավոր օդային հաղորդակցություն հաստատելու նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հ ԾԱՌԻՐՈՒՄ

Կողմերի միջև կոնվենցիայի մոդիֆիկացիան

Հոդված 1 *Սահմանումներ*

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում, եթե Համաձայնագրի տեքստում այլ մեկնաբանություն չի տրվում.

ա. «Ավիացիոն իշխանություններ» - Հայաստանի Հանրապետության ղեպրում՝ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, Հնդկաստանի ղեպրում՝ քաղաքացիական ավիացիայի գլխավոր տնօրեն, կամ երկու ղեպրերում էլ՝ ցանկացած անձ կամ մարմին, որը լիազորված է կատարելու այդ իշխանությունների կողմից ներկայումս իրականացվող գործառնությունները:

բ. «Նշանակված ավիաընկերություն» - այն ավիաընկերությունը/ները/, որը գրավոր ձևով նշանակված և լիազորված է մի Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանությունների կողմից և ներկայացված է մյուս Պայմանավորվող Կողմին՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածին համապատասխան:

գ. «Կոնվենցիա» - «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիան, որը ստորագրվել է Չիկագոյում և բաց է միացման համար 1944թ. դեկտեմբերի 7-ից, ինչպես նաև դրա ցանկացած հավելված, որն ընդունվել է այդ կոնվենցիայի 90-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև ցանկացած ուղղում, որը կատարվել է կոնվենցիայի 90-րդ և 94-րդ հոդվածների համաձայն, եթե այդ հավելվածներն ու ուղղումներն ընդունել են Պայմանավորվող Կողմերը:

դ. «Տարածք», «Օդային հաղորդակցություն», «Միջազգային օդային հաղորդակցություն», «Կանգառ ոչ առևտրական նպատակներով» - ունեն այն նշանակությունը, որը դրանց համար սահմանված է կոնվենցիայի 96-րդ և 2-րդ հոդվածներով:

Հոդված 2 *Երթևեկության իրավունքների տրամադրում*

1. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը մյուս Պայմանավորվող Կողմին տրամադրում է սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքներ՝ սույն Համաձայնագրի Հավելվածով սահմանված երթուղիներով միջազգային կանոնավոր հաղորդակցություններ հաստատելու նպատակով: Այսպիսի չվագծերը և երթուղիները այսուհետ կանվանվեն, համապատասխանաբար, «համաձայնեցված հաղորդակցություններ» և «սահմանված երթուղիներ»:

2. Սույն Համաձայնագրի դրույթների համաձայն՝ Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի նշանակված ավիաընկերությունը օգտվելու է հետևյալ իրավունքներից.

ա) անվայրէջք բռիչք կատարել մյուս Պայմանավորվող Կողմի տարածքի վրայով.

բ) մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում վայրէջքներ կատարել ոչ առևտրական նպատակներով:

գ) սահմանված երթուղով օդային հաղորդակցություն կատարելիս յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերությունը օգտվելու է սույն Համաձայնագրի Հավելվածում տվյալ երթուղու համար սահմանված վայրերում/երում միջազգային երթևեկությամբ բնթացող ուղևորներին նստեցնելու, իջեցնելու, փոստը, բեռները բեռնելու, բեռնաթափելու իրավունքից:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում ոչինչ չի դիտվի որպես մի Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերությանը իրավունքի տրամադրում ուղևորներ, բեռ, փոստ փոխադրելու մյուս Պայմանավորվող Կողմի բնակավայրերի միջև:

4. Մի Պայմանավորվող Կողմի օրենքներն ու կանոնները, որոնք կարգավորում են միջազգային օդագնացության մեջ ընդգրկված օդանավերի իր տարածք ժամանումը և մեկնումը, այդ օդանավերի շահագործումը և օդագնացությունը, նրա տարածքում գտնվելիս, կկիրառվեն մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության օդանավերի նկատմամբ:

5. Մի Պայմանավորվող Կողմի օրենքներն ու կանոնները, որոնք կարգավորում են ուղևորների, անձնակազմերի, բեռների և փոստի ժամանումը, մնալը և մեկնումը նրա տարածքից, ինչպես նաև դրանց վերաբերող անձնագրային, մաքսային, արժույթային ու սանիտարական կանոնները, կկիրառվեն մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության օդանավերի, ուղևորների, անձնակազմերի, բեռների և փոստի նկատմամբ առաջին Պայմանավորվող Կողմի տարածքի սահմաններում գտնվելիս:

Հոդված 3

Ավիաընկերությունների նշանակումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իրավունք կունենա մյուս Պայմանավորվող Կողմին գրավոր ծանուցմամբ նշանակել երկուսից ոչ ավելի ավիաընկերություն(ներ)՝ սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման նպատակով:

2. Նման ծանուցում ստանալուց հետո մյուս Պայմանավորվող Կողմը, սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթների համաձայն, նշանակված ավիաընկերությանը անհապաղ կտրամադրի համապատասխան շահագործման լիազորություններ:

3. Մի Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանությունները կարող են մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերությունից պահանջել, որ վերջինս համապատասխանի այն օրենքներին և կանոններին, որոնք սովորաբար այդ իշխանությունների կողմից կիրառվում են կոնվենցիայի դրույթների համաձայն միջազգային հաղորդակցություններ շահագործելիս:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իրավունք ունի մերժել (սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն) բոլիշների բույլտվություն տալը կամ պահանջել այնպիսի պայմանների կատարում, որոնք նա անհրաժեշտ է համարում նշանակված

ավիաընկերության կողմից սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված իրավունքներն օգտագործելիս ամեն դեպքում, երբ հիշյալ Կողմը չունի ապացույցներ, որ այդ ավիաընկերության նկատմամբ նյութական սեփականության իրավունքը և իրական վերահսկողությունը պատկանում է այդ Պայմանավորվող Կողմին կամ նրա քաղաքացիներին: Այդ նպատակով «նյութական սեփականության և իրական վերահսկողություն» հասկացությունը նշանակում է, որ ամեն դեպքում, երբ նշանակված ավիաընկերությունը իրականացնում է օդային հաղորդակցություն, ղեկավարվելով սույն Համաձայնագրի դրույթներով, և կնքում է համաձայնագիր ցանկացած այլ երկրի ավիաընկերության կամ այլ երկրի կառավարության կամ նրա քաղաքացիների հետ, պետք է կասկած չունենա, որ որ այդ նշանակված ավիաընկերության նյութական գերակշռելի սեփականությունը կամ նրա վերահսկողությունը պատկանում է այդ Պայմանավորվող Կողմին կամ նրա քաղաքացիներին: Այդ Պայմանավորվող Կողմին կամ նրա քաղաքացիներին պետք է պատկանի նշանակված ավիաընկերության գույքի մեծ մասը, նաև՝ ա) նշանակված ավիաընկերության ղեկավարման վերահսկողությունը, բ) իրական վերահսկողությունը օդանավերի համակազմի և սարքավորումների մեծ մասի վերաբերյալ:

5. Այս ձևով նշանակված և լիազորված ավիաընկերությունը կարող է ցանկացած պահի սկսել համաձայնեցված հաղորդակցությունների շահագործումը՝ սույն, 10-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 4

Թռիչքների իրավունքը չեղյալ հայտարարելը կամ դադարեցնելը

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմին իրավունք է վերապահվում չեղյալ հայտարարելու թռիչքի բույլովությունը, ժամանակավորապես դադարեցնելու այն կամ պահանջելու պահպանել այնպիսի պայմաններ, որոնք նա անհրաժեշտ է համարում այն դեպքում, եթե այդ ավիաընկերությունը չի պահպանում մյուս Պայմանավորվող Կողմի օրենքներն ու կանոնները, կամ երբ, մի Պայմանավորվող Կողմի կարծիքով, մյուս Պայմանավորվող Կողմի ավիաընկերությունը այլ կերպով չի պահպանում այն պայմանները, ըստ որոնց տրված են իրավունքներ՝ սույն Համաձայնագրի համաձայն: Այդ իրավունքը կօգտագործվի նաև այն դեպքում, եթե 3-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները չպահպանվեն: Նման քայլերը կձեռնարկվեն միայն սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածի դրույթների համաձայն, Պայմանավորվող Կողմերի՝ միմյանց հետ խորհրդակցելուց հետո, եթե իրավունքները դադարեցնելը կամ բույլովության անհապաղ չեղյալ հայտարարելը անհրաժեշտ են սույն Համաձայնագրի դրույթների, օրենքների ու կանոնների հետագա խախտումների կանխման համար:

Հոդված 5

Գանձումները շահագործողներից

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իրավունք ունի սահմանել կամ բույլատրել սահմանման համար օդանավակայանների կամ այլ ավիացիոն

միջոցների շահագործման, արդարացի և հավասար պայմաններ՝ պայմանով, որ այս վճարները չգերազանցեն մյուս՝ նույն միջազգային օդային փոխադրումներ իրականացնող ավիաընկերությունների վճարները:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պետք է քաջալերի խարհրդակցություններ իր՝ համապատասխան գանձումներ իրականացնող մարմինների և ծառայություններն ու միջոցներն օգտագործող նշանակված ավիաընկերությունների միջև, հնարավորության դեպքում այդ խորհրդակցությունները կանցկացվեն ավիաընկերությունները ներկայացնող կազմակերպությունների միջոցով: Շահագործման գանձումների փոփոխությանը վերաբերող ցանկացած առաջարկություն պետք է տրվի օգտագործողներին, որպեսզի նրանք հնարավորություն ունենան իրենց տեսակետը ներկայացնել այդ փոփոխությունը կատարվելուց առաջ:

3. Պայմանավորվող Կողմերից ոչ մեկը ներգաղթի, մաքսային, կարանտինի և նման կարգավորումներում կամ օդանավակայանների, ավիատոլիների, օդային փոխադրումների ծառայությունների և իր վերահսկման ներքո գտնվող հարակից այլ ընթացակարգերի կիրառման հարցում նախապատվություն չի տալու իր կամ որևէ այլ ավիաընկերության՝ համանման միջազգային օդային հաղորդակցությունները իրականացնող մյուս Պայմանավորվող Կողմի ավիաընկերության նկատմամբ:

Հոդված 6

Մաքսային տուրքերը և ընթացակարգերը

1. Պայմանավորվող Կողմերից որևէ մեկի նշանակված ավիաընկերությունների կողմից միջազգային հաղորդակցություններում շահագործվող օդանավը, ինչպես նաև նրա ցուցակագրված գույքը, վառելանյութի պաշարները և քսանյութերը, օդանավի մեջ գտնվող պահեստամասերը, որոնք բերվել են այդ օդանավով կամ օդանավ են վերցվել միայն այդ օդանավում կամ այդ օդանավի կողմից օգտագործման նպատակով, բոլոր մաքսային տուրքերի, տեսչական վճարների և մյուս հարկերի և տուրքերի առնչությամբ մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում կարժանանան ոչ պակաս բարենպաստ պայմանների, քան այն պայմաններն են, որոնք սահմանված են այդ Պայմանավորվող Կողմի նշանակված սեփական ավիաընկերության համար, որն իրականացնում է միջազգային կանոնավոր օդային հաղորդակցություններ, կամ այլ բարենպաստ պայմաններ վայելող երկրի ավիաընկերություններին:

2. Նման պայմաններ կգործեն նաև օդանավի այն պահեստամասերի առնչությամբ, որոնք բերվել են մի Պայմանավորվող Կողմի տարածք մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության կողմից՝ միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող օդանավի տեխնիկական սպասարկման կամ վերաներդրման համար:

3. Ոչ մի Պայմանավորվող Կողմ չի պարտավորվում ազատել մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերությանը մաքսային տուրքերից, տեսչական վճարներից կամ համանման հարկերից, մինչև այդ մյուս Պայմանավորվող

Կողմը չազատի առաջին Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերությանը նույն գանձումներից:

4. Օդանավին պատկանող՝ օդագնացության՝ ցուցակագրված սարքավորումները, ինչպես նաև նյութերը և պաշարները, որոնք գտնվում են որևիցե Պայմանավորվող Կողմի օդանավում, կարող են մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում բեռնաթափվել միայն այդ տարածքի մաքսային իշխանությունների համաձայնությամբ:

5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում նշված նյութերը կարող են պահվել մաքսատան հսկողության կամ վերահսկողության ներքո:

6. Ուղիղ տարանցիկ (տրանզիտ) ուղևորները, անցնելով մի Պայմանավորվող Կողմի տարածքով, պետք է ենթակա լինեն պարզեցված հսկման: Ուղիղ տարանցիկ (տրանզիտ) բեռն ու ուղեբեռը պետք է ազատվեն մաքսատուրքերից և այլ համանման հարկերից:

Հոդված 7

Ներկայացուցչություն

1. Պայմանավորվող Կողմերի նշանակված ավիաընկերությանը, փոխադարձության հիման վրա, իրավունք է ընձեռվում մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում ունենալ իր ներկայացուցիչներն ու առևտրային, գործառնական և տեխնիկական աշխատակազմը, որը կպահանջվի համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման կապակցությամբ: Այս աշխատակազմը, ըստ անհրաժեշտության, պետք է կազմված լինի երկու Պայմանավորվող Կողմերի քաղաքացիներից կամ մշտական բնակություն ունեցող անձանցից:

2. Այս հարցերը կարգավորելու համար յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերություն կարող է օգտագործել իր սեփական աշխատակազմը կամ ստանձնել վերոհիշյալ գործառույթների իրականացումը որևիցե կազմակերպության, ընկերության կամ էլ որևիցե ավիաընկերության, որը գործում է այդ Պայմանավորվող Կողմի տարածքում և լիազորված է վերջինիս կողմից՝ զբաղվելու այդ գործունեությամբ:

3. Ներկայացուցիչները և աշխատակազմը պետք է ենթարկվեն մյուս Պայմանավորվող Կողմի գործող օրենքներին ու կանոններին և գործեն այդ օրենքների և կանոնների համաձայն, այդ Պայմանավորվող Կողմը պետք է, փոխադարձության հիման վրա, նվազագույն ուշացմամբ տրամադրի սույն հոդվածի 1-ին կետում նշված ներկայացուցիչներին և աշխատակազմին անհրաժեշտ աշխատանքային բույլտվություններ, աշխատանքային վիզաներ և այլ համանման փաստաթղթեր:

4. Փոխադարձության հիման վրա յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերությանը իրավունք է տրամադրում իր տարածքում ուղղակիորեն կամ, ըստ իր հայեցողության, գործակալությունների միջոցով իրականացնելու ավիափոխադրումների վաճառք: Յուրաքանչյուր նշանակված ավիաընկերություն պետք է իրավունք ունենա իրականացնելու

նման ավիափոխադրումների վաճառք, և ցանկացած անձ ազատ կլինի գնելու այդ ավիափոխադրումները տեղական կամ ցանկացած այլ ազատ փոխարկելի տարադրամով:

Հոդված 8

Ազգային օրենքների կիրառելիությունը

1. Սի Պայմանավորվող Կողմի այն օրենքներն ու կանոնները, որոնք կարգավորում են միջազգային նավիգացիայում կամ հաղորդակցություններում ընդգրկված օդանավերի՝ մյուս Պայմանավորվող Կողմի տարածք ժամանումը և մեկնումը, կամ նման օդանավի իր տարածքում գտնվելու ընթացքում շահագործմանը և նավիգացիային, կկիրառվեն նաև մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության օդանավերի նկատմամբ:

2. Սի Պայմանավորվող Կողմի այն օրենքներն ու կանոնները, որոնք կարգավորում են ուղևորների, անձնակազմի, բեռի և փոստի ժամանումը, մնալը և մեկնումը, և որոնք վերաբերում են անձնագրային, մաքսային, տարադրամի, առողջապահությանը և կարանտինին, պետք է կիրառվեն մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության օդանավերի ուղևորների, անձնակազմի, բեռի և փոստի նկատմամբ՝ նրանց նշված տարածքում գտնվելիս:

Հոդված 9

Հաղորդակցությունների տարողությունը և հաճախականությունը

1. Երկու Պայմանավորվող Կողմերի նշանակված ավիաընկերությունների համար պետք է լինեն արդար և հավասար պայմաններ՝ նրանց համապատասխան տարածքների միջև սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցություններ իրականացնելու համար:

2. Համաձայնեցված հաղորդակցություններ իրականացնելիս յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերություն պետք է հաշվի առնի մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության շահերը այն նկատառումով, որ անտեղի վնաս չպատճառի միևնույն երթուղում վերջինիս իրականացրած հաղորդակցություններին:

3. Նշանակված ավիաընկերությունների կողմից համաձայնեցված հաղորդակցություններում ապահովելիք տարողությունը պետք է սերտորեն համապատասխանի երկու Պայմանավորվող Կողմերի տարածքների միջև սպասվող օդային երթևեկության հասարակական պահանջներին:

4. Հիմնվելով վերը նշված կետերի դրույթներին՝ յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության կողմից իրականացվելիք հաղորդակցությունների տարողությունը և հաճախականությունը պետք է համաձայնեցվեն երկու Պայմանավորվող Կողմերի նշանակված ավիաընկերությունների միջև և հաստատվեն երկու Պայմանավորվող Կողմերի ավիացիոն իշխանությունների կողմից:

5. Պայմանավորվող Կողմերից մեկի նշանակված ավիաընկերության կողմից հաղորդակցությունների տարողությունների և հաճախականությունների ցանկացած ավելացում պետք է նախապես հիմնվի Պայմանավորվող Կողմերի տարածքների միջև փոխադրումների աճող պահանջներին և լինի Պայմանավորվող Կողմերի ավիացիոն իշխանությունների կողմից համաձայնեցման առարկա: Մինչև նման համաձայնության կամ լուծման առկայությունը, ուժի մեջ կմնան նախորդ ծավալները և հաճախականությունը:

Հոդված 10

Շահագործմանը վերաբերող տեղեկությունների տրամադրում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանությունները պետք է պարտավորեցնեն իրենց նշանակված ավիաընկերությանը/ներին/ մյուս Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանություններին նրանց կողմից քննարկման և հաստատման նպատակով ներկայացնել հաղորդակցությունների բնույթին, նրանց հաճախականությանը, շահագործվող օդանավերի տեսակին վերաբերող տեղեկություններ և բոլոր այլն չվացուցակը՝ համաձայնեցված հաղորդակցությունները սկսելուց առնվազն վաթսու (60) օր առաջ: Համաձայնեցված հաղորդակցությունների շահագործմանը վերաբերող ցանկացած փոփոխության դեպքում այդպիսի տեղեկություններ պետք է նաև տրամադրվեն առնվազն երեսու (30) օր առաջ:

2. Նշանակված ավիաընկերությունները պետք է տրամադրեն մյուս Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանություններին, ըստ պահանջի, ցանկացած այլ տեղեկություն՝ պատշաճորեն բավարարելու համար Համաձայնագրից բխող պահանջները:

Հոդված 11

Վիճակագրական տվյալների տրամադրում

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանությունները պետք է պարտավորեցնեն իրենց նշանակված ավիաընկերությանը՝ տրամադրելու մյուս Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանություններին վիճակագրական տվյալներ այդ մյուս Պայմանավորվող Կողմի տարածքից և նրա տարածքից ամեն ամսվա ընթացքում համաձայնեցված հաղորդակցություններում իրականացվող փոխադրումների մասին՝ նշելով նման երթևեկության ժամանման և մեկնման երկրները, բեռնման ու բեռնաթափման վայրերը: Այսպիսի տվյալները պետք է տրամադրվեն որքան հնարավոր է արագ, ամեն ամսվա ավարտին:

Հոդված 12

Սակագներ

1. Ներքոհիշյալ կետերի նպատակների սահմաններում «սակագին» տերմինը նշանակում է՝ ուղևորների և բեռի փոխադրման համար վճարվելիք գումարներ, նաև պայմանների համար, որոնց ներքո կիրառվում են այս գումարները, ներառյալ

գործակալության և այլ օժանդակ ծառայությունների համար պայմանները և գումարները, բացառությամբ փոստի փոխադրման վճարների և պայմանների:

2. Պայմանավորվող Կողմերից մեկի տարածք և տարածքից կատարվող փոխադրումների համար մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության կողմից գանձվող սակագները պետք է սահմանվեն ընդունելի չափերով՝ հաշվի առնելով հնարավոր բոլոր համապատասխան գործոնները, այդ թվում նաև՝ շահագործման ծախսերը, ընդունելի շահույթը, մյուս ավիաընկերությունների սակագները:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված սակագները հնարավորության դեպքում պետք է համաձայնեցվեն երկու Պայմանավորվող Կողմերի նշանակված ավիաընկերությունների միջև, և այդ համաձայնությունը, որտեղ որ հնարավոր է, պետք է կայացվի՝ օգտագործելով Միջազգային օդային տրանսպորտի ասոցիացիայի ընթացակարգերը:

4. Այս ձևով համաձայնեցված սակագները պետք է ներկայացվեն Պայմանավորվող Կողմերի ավիացիոն իշխանությունների համաձայնեցմանը դրանց կիրառելուց առնվազն 60 օր առաջ: Առանձին դեպքերում այդ ժամկետը ավիացիոն իշխանությունների համաձայնությամբ կարող է կրճատվել:

5. Այս համաձայնությունը կարող է կայացվել անհապաղ, եթե ավիացիոն իշխանություններից ոչ մեկը սակագների ներկայացումից հետո 30 օրվա ընթացքում չհայտնի իր անհամաձայնությունը՝ սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, ապա այդ սակագները համարվում են հաստատված: Այն դեպքում, եթե համաձայնեցման ժամկետը կրճատվում է սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, ավիացիոն իշխանությունները կարող են պայմանավորվել, որ համաձայնեցման ժամկետը փնի 30 օրից պակաս:

6. Եթե ինչ-որ պատճառներով սակագինը չի կարող համաձայնեցվել սույն հոդվածի 3-րդ կետի համապատասխան, կամ այն դեպքում, երբ մի Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանությունները, 5-րդ կետում նշված ժամկետում, հայտնել են իրենց անհամաձայնությունը մյուս Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանություններին 3-րդ կետի համապատասխան համաձայնեցված որևիցե սակագնի վերաբերյալ, Պայմանավորվող Կողմերի ավիացիոն իշխանությունները պետք է ձգտեն սակագինը սահմանել երկկողմանի համաձայնությամբ:

7. Եթե ավիացիոն իշխանությունները չեն կարող համաձայնության գալ որևիցե սակագնի վերաբերյալ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան իրենց ներկայացված, կամ որևիցե սակագնի հաստատմանը՝ 6-րդ կետին համապատասխան, ապա այդ տարաձայնությունը պետք է կարգավորվի սույն Համաձայնագրի 18-րդ հոդվածի դրույթների համաձայն:

8. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան սահմանված սակագինը պետք է ուժի մեջ մնա այնքան, քանի դեռ նոր սակագին չի սահմանվել: Այնուամենայնիվ,

տվյալ սակագինը սույն կետի համաձայն չի կարող երկարաձգվել իր գործողության ժամկետի լրացման օրվանից 12 ամսից ավելի ժամկետով:

Հոդված 13

Եկամուտների փոխանցում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերությանը իրավունք է տրամադրում փոխանցելու իր գլխավոր գրասենյակ ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցված այն գումարները, որոնք ստացվել են առաջին Պայմանավորվող Կողմի տարածքում: Այդ փոխանցումները պետք է կատարվեն փոխարկելի տարադրամով՝ համապատասխան այն Պայմանավորվող Կողմի փոխարկման կանոնների, որի տարածքում այս շահույթները ձեռք են բերվել:

2. Այս փոխանցումները պետք է կատարվեն ըստ տարադրամային վճարի պաշտոնական փոխարժեքի, կամ, եթե այդպիսի գոյություն չունեն, ըստ օտարերկրյա փոխարկման շուկայի տարադրամային վճարման փոխարժեքի:

3. Եթե Պայմանավորվող Կողմերի միջև գործում է վճարումների փոխանցումները կարգավորող համաձայնագիր, ապա նրա դրույթները պետք է կիրառվեն սույն հոդվածի 1-ին կետի համաձայն փոխանցվող միջոցների նկատմամբ:

Հոդված 14

Ավիացիոն անվտանգություն

1. Միջազգային իրավունքից բխող իրենց իրավունքներին ու պարտավորություններին համապատասխան Պայմանավորվող Կողմերը հաստատում են, որ անօրինական միջամտության ձեռնարկումներից քաղաքացիական ավիացիայի անվտանգությունը պաշտպանելու միմյանց հանդեպ ստանձնած պարտավորությունները սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են: Չսահմանափակելով իրենց իրավունքների ու պարտավորությունների ընդհանուր կիրառելիությունը ըստ միջազգային իրավունքի, Պայմանավորվող Կողմերը գործում են «Օդանավերում կատարվող հանցագործությունների ու որոշ այլ ձեռնարկումների վերաբերյալ» կոնվենցիայի (ստորագրվել է Տոկիոյում 1963թ. սեպտեմբերի 14-ին), «Օդանավերի անօրինական գրավման դեմ պայքարելու մասին» կոնվենցիայի (ստորագրվել է Հաագայում 1970թ. դեկտեմբերի 16-ին), «Զաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական ձեռնարկումների դեմ պայքարելու մասին» կոնվենցիայի (ստորագրվել է Մոնրեալում 1971թ. սեպտեմբերի 23-ին) դրույթների համապատասխան:

2. Պայմանավորվող Կողմերը, պահանջի դեպքում, պետք է միմյանց անհրաժեշտ օժանդակություն ցույց տան՝ կանխելու օդանավերի ապօրինի գրավման գործողությունները և օդանավերի, դրանց ուղևորների, անձնակազմերի, օդանավակայանների և օդագնացային միջոցների անվտանգության դեմ ուղղված անօրինական այլ ձեռնարկումները, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիքը:

3. Պայմանավորվող Կողմերը գործում են Բաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ավիացիոն անվտանգության, տեխնիկական պահանջների և «Միջազգային քաղաքացիական ավիացիայի վերաբերյալ» կոնվենցիային որպես Հավելված հանդիսացող դրույթների համապատասխան այնքանով, որքանով այդ դրույթներն ու պահանջները կիրառելի են Պայմանավորվող Կողմերի նկատմամբ: Կողմերը պետք է պահանջեն, որ իրենց գրանցված օդանավեր շահագործողները, որոնց գործունեության հիմնական կամ մշտապես գտնվելու վայրը իրենց տարածքում է, և իրենց տարածքում եղած միջազգային օդանավակայանները շահագործողները գործեն ավիացիոն անվտանգության դրույթներին ու պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ համաձայնվում է, որ մյուս Պայմանավորվող Կողմը կարող է օդանավերի այդպիսի շահագործողներից պահանջել, որ կիրառեն սույն հոդվածի 3-րդ կետում հիշատակված ավիացիոն անվտանգության դրույթներն ու պահանջները, որոնք այդ մյուս Պայմանավորվող Կողմը նախատեսում է մուտք գործելու, մեկնելու և իր տարածքում գտնվելու համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ապահովելու է պատշաճ միջոցների կիրառումը օդանավի պաշտպանության և մինչև օդանավ նստելը կամ բեռնումը և այդ ընթացքում ուղևորների, անձնակազմի, ձեռնածանրացների, բեռների, ուղեբեռների և օդանավի պաշարների ստուգման համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ բարյացակամաբար է քննելու մյուս Պայմանավորվող Կողմի՝ կոնկրետ սպառնալիքի առնչությամբ անվտանգության հատուկ միջոցներ ձեռնարկելու ամեն մի խնդրանք:

5. Երբ միջադեպ է տեղի ունենում կամ միջադեպի սպառնալիք է առկա՝ կապված օդանավի ապօրինի գրավման հետ, կամ այլ անօրինական ձեռնարկումներ՝ ուղղված օդանավի, ուղևորների ու անձնակազմի, օդանավակայանների կամ օդագնացային միջոցների անվտանգության դեմ, Պայմանավորվող Կողմերը միմյանց օգնություն են ցույց տալիս՝ դյուրացնելով կապը և նման միջադեպի կամ դրա սպառնալիքի արագ ու անվտանգ կասեցման նպատակով միջոցներ ձեռնարկելով:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պետք է միջոցներ ձեռնարկի, որոնք ինքը հարկ կհամարի հետևանքների վերացումն ապահովելու համար, երբ անօրինականորեն գրավված կամ ապօրինի միջամտության այլ գործողության ենթարկված օդանավը վայրէջք կատարի իր տարածքում, միջոցներ է ձեռնարկելու այն կալանելու համար, եթե դա չի սպառնում ուղևորների կյանքին: Այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է, նման միջոցառումներ պետք է ձեռնարկվեն փոխադարձաբար խորհրդակցելուց հետո:

7. Սույն հոդվածի դրույթներից ցանկացած շեղում կարող է հիմք հանդիսանալ սույն Համաձայնագրի 4-րդ հոդված դրույթների կիրառման համար:

Հոդված 15 *Խորհրդակցություններ*

Պայմանավորվող Կողմերի ավիացիոն իշխանությունները փոխադարձ սերտ համագործակցության ոգով կանոնավոր ձևով միմյանց հետ խորհրդակցելու են՝ սույն Համաձայնագրի մեկնաբանումն և կատարումն ապահովելու նպատակով:

Հոդված 16 *Փոփոխություններ*

1. Եթե Պայմանավորվող Կողմերից մեկը ցանկալի է համարում սույն Համաձայնագրի ցանկացած դրույթի փոփոխումը, ապա նա կարող է խորհրդակցություն խնդրել մյուս Պայմանավորվող Կողմի հետ: Նման խորհրդակցությունները, որոնք կարող են լինել ավիացիոն իշխանությունների միջև և կարող են անցկացվել քննարկումների կամ նամակագրության միջոցով, պետք է սկսվեն գրավոր հարցապնդման օրվանից 60 օրվա ընթացքում: Այս ձևով համաձայնեցված ցանկացած փոփոխություն ուժի մեջ կմտնի և կհաստատվի դիվանագիտական հայտագրերի փոխանակումից հետո:

2. Հավելվածում սահմանված երթուղիների փոփոխությունները կկատարվեն Պայմանավորվող Կողմերի իրավասու ավիացիոն իշխանությունների անմիջական համաձայնությամբ և կհաստատվեն գրավոր ծանուցման միջոցով:

Հոդված 17 *Վիճարանությունների կարգավորումը*

Սույն Համաձայնագրի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող ամեն մի տարաձայնության առկայության դեպքում այն պետք է կարգավորվի Պայմանավորվող Կողմերի ավիացիոն իշխանությունների անմիջական բանակցությունների միջոցով: Եթե ավիացիոն իշխանությունները չկարողանան համաձայնության գալ, ապա վիճարանության լուծումը ստանձնվելու է Պայմանավորվող Կողմերին:

Հոդված 18 *Օդային տրանսպորտին վերաբերող բազմակողմանի կոնվենցիաների կիրարկելիությունը*

1. Սույն Համաձայնագրով հաստատված օդային հաղորդակցությունների նկատմամբ նրանց կիրարկելիության չափով, համաձայնագրի գործողության ողջ ընթացքում կոնվենցիայի դրույթները Պայմանավորվող Կողմերի համար պետք է պահպանվեն իրենց ներկա ձևով, որպես համաձայնագրի անբաժան մաս, մինչև որ երկու Պայմանավորվող Կողմերը վավերացնեն կոնվենցիայի ցանկացած փոփոխություն, որը պետք է համապատասխանորեն ուժի մեջ մտնի, և որի դեպքում նման ձևով փոփոխված կոնվենցիան կշարունակի մնալ ուժի մեջ սույն Համաձայնագրի գործողության ողջ ընթացքում:

2. Եթե Պայմանավորվող Կողմերը միանում են ցանկացած միջազգային օդային տրանսպորտին վերաբերող բազմակողմանի կոնվենցիայի, այդ կոնվենցիայի դրույթները կլինեն գերիշխող:

Հոդված 19

Հավելված

Սույն Համաձայնագրի Հավելվածը հանդես է գալիս որպես սույն Համաձայնագրի անբաժանելի մաս, և ցանկացած հղում սույն Համաձայնագրին վերաբերում է նաև նրա Հավելվածին, բացառությամբ հատուկ նշված դեպքերի:

Հոդված 20

Ուժի մեջ մտնելը


Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Պայմանավորվող Կողմերի միմյանց ծանուցելու օրվանից:

Հոդված 21


Գործողության դադարեցումը

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կարող է ցանկացած ժամանակ գրավոր ծանուցման միջոցով հայտնել մյուս Պայմանավորվող Կողմին սույն Համաձայնագրի գործողության դադարեցման մասին իր մտադրությունը: Միաժամանակ նույնպիսի բովանդակությամբ ծանուցագիր է ուղարկվում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն: Այդ դեպքում տվյալ Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է 12 ամիս անց այն օրվանից, երբ այդ ծանուցագիրը ստանում է մյուս Պայմանավորվող Կողմը, բացառությամբ այն դեպքի, երբ նշված ծանուցագիրը մինչև այդ ժամանակահատվածի լրանալը հետ չի վերցվում Կողմերի երկուստեք համաձայնությամբ: Եթե ծանուցագիրը ստանալու մասին մյուս Կողմի հաստատումը չի ստացվել, ապա ծանուցագիրը ստացված է համարվում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում այն ստանալուց 14 օր հետո:

Կատարված է Նյու Դելիում 2000թ. դեկտեմբերի «⁵»-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հնդկերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Տեքստերի մեկնաբանման ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տեքստին:



Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից



Հնդկաստանի
կառավարության կողմից